

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԵՎ
ԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ**

ՆԱԽՐԱ ԲԱԼԱՅԱՆ

բ.գ.թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ
Բանալի բառեր՝ արևմտահայերեն, դպրոց, բուհ, գրականություն, դասագիրք,
կրթություն, բարոյական միջավայր:

Հայաստանում սովորող արևելահայերի համար արևմտահայերենով ստեղծագործությունները այսօր դժվարություն են ներկայացնում ինչպես կարդալու, այնպես էլ լիովին հասկանալու առումով: Եթե արևմտահայերենը լայն առումով չհասկանալը¹ առարկայորեն կախված է արևելահայերենի զարգացումից և երկու ճյուղերի միմյանցից հեռանալուց, ապա դպրոցի վերջին և բուհի առաջին տարիներին լեզուն վատ հասկանալը ծագում է դպրոցական ուսուցման չգրանցված այն մեթոդներից, որոնք պարտադրում են անգիր անել չափածո գործեր՝ առանց հասկանալու լեզվական նրբությունները, ինչպես նաև հպանցիկ անդրադառնալ արձակ ստեղծագործություններին՝ ընթերցելով և վերապատմելով դրանց վերլուծությունը՝ միավոր ստանալու համար:

Դպրոցի 10-12-րդ դասարանների հումանիտար ընդհանուր հոսքի «Հայ գրականություն» դասագրքերում ներկայացված են Գ. Զոհրապի, Մ. Մեծարենցի, Շ. Շահնուրի, Դ. Վարուժանի և այլոց ստեղծագործությունները՝ համապարփակ վերլուծություններով, սփյուռքահայ և օտարագիր հայ գրողների պատկառելի մի շարք՝ հակիրճ, բայց բովանդակալից շարադրանքով: Բայց այս գրողների գործերից դպրոցն ավարտած աշակերտների մեծամասնությունը գրեթե չի կարդացել, նույնիսկ չգիտի նրանց մասին: Այնինչ այդ իմացությունը պետք է ոչ միայն բանասեր դառնալ ցանկացողներին, այլև մարդուն, որ իր պատմության մի կարևոր շրջանի՝ Արևմտյան Հայաստանի և Սփյուռքի գեղարվեստական գրականության, գրական վավերագրության ճանաչողությամբ ու դաստիարակությամբ հայ պետության գիտակից քաղաքացի պետք է դառնա: Արևմտահայերենի, արևմտահայ և սփյուռքահայ գրականության այսպիսի ծանծաղ գիտելիքներով էլ ավագ դպրոցի նորավարտ աշակերտները դառնում են ուսանող՝ ոչ միայն չտիրապետելով արևմտահայերեն գրական ստեղծագործություններին ընկալման և վերլուծման մեխանիզմներին, այլև մեծ հաշվով՝ չհասկանալով արևմտահայերենը: Պետք է խոստովանել, որ խնդիրը միայն արևմտահայերենով չկարդալը չէ, այլ ընդհանրապես չկարդալը և հոդաբաշխ հայերենով շարադրանք գրել չկարողանալը, որի մեղավորը ոչ միայն ընտանիքն ու հասարակությունն են, այլև դպրոցը, և մեծ հաշվով՝ այսօրվա երիտասարդի արժեհամակարգի հիմնային փոփոխությունները:

¹ 2010 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն արևմտահայերենը դասեց «վտանգված լեզուների» շարքին, քանի որ վերապրածների փոքրաթիվ ժառանգներն են միայն այլ երկրներում մնացել որպես լեզվակիրներ:

20-րդ դարի սկզբին Գրիգոր Զոհրապը գրել է. «Մեր ըմբռնումովը, ուսուցչութիւնը որեւէ մասնագիտութենէ աւելի բան մըն է, ինքնիրմեն բան մըն է ան, այլ նաև զարգացումի հատուկ մթնոլորտի մը, բարոյական ու իմացական մասնաւոր միջավայրի մը անհրաժեշտ ենթական...» [Զոհրապ, 2002: 289]: Այս տողերը նա հասցեագրել է ժամանակի կրթության և ուսուցման մասնագետներին, առաջադրել խնդիրներ, որոնք արդիական են նաև այսօր:

Բացի լեզվի խնդրից՝ արևմտահայ և սփյուռքահայ ստեղծագործությունների ուսուցման դժվարությունների մի հայեցակետ էլ գրական գործերի թեմաների՝ այսպես ասած՝ դժվարընկալունակությունն է՝ պայմանավորված արևելահայ իրականության որոշ ըմբռնումներով, անգամ տաբուներով, որն այսօր բավական դժվարություններ է առաջացնում ոչ միայն դպրոցում, այլև բուհում, ընդ որում՝ երբեմն անգամ մասնագիտական բաժիններում: Թեմաների ուսուցման դժվար հաղթահարելի խնդիրը վերաբերում է ստեղծագործությունների սեռականության, բարոյականության և այս համատեքստում «յուրատիպ» կանանց կերպարների բացահայտմանը:

Գեղարվեստական մեծ արժեք ու խոհափիլիսոփայական խոր շերտեր ունեցող և սեռի, կանանց կերպարների վերլուծություն պահանջող ստեղծագործություններից ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի դասագրքերում տեղ են տրվել Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի, Շ. Շահնուրի գործերին: Բուհում դժվարություններ հետազայում ծագում են հիմնականում Զոհրապի որոշ նովելների՝ «Փոստալ», «Մագթաղինե», «Թեֆարիկ», «Այրին», մեծարենցյան բացախոսական պատկերների, Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուի «Ո՛ր Տալիթա», «Ով Լալագեն», «Գրգանք» և այլ բանաստեղծությունների, «Հարճը» պոեմի, Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի՝ դասագրքային բառով ասած՝ անառակ կանանց կերպարների շուրջ: Զոհրապը իր նովելներում վեր է հանել կնոջ հասարակական ընկալման հետ կապված բազմազան խնդիրներ. դրանք բացահայտում են հասարակության մեջ կնոջն առնչվող անառողջ դրսևորումները, ընտանիքում, ամուսնական և ազատ հարաբերություններում կնոջ դերը և նրա սեռականության խնդիրը, կնոջ ուսման ու աշխատանքի կարևորության նշանակությունը: Չնայած դասագրքում [Գասպարյան, Քալանթարյան, 2010: 17-76] արծարծվում են ստեղծագործությունների վերոնշյալ խնդիրների պարզաբանումներ, այդուհանդերձ վերոնշյալ հարցերի շուրջ ուսուցիչը կա՛մ պահպանում է լռություն, կա՛մ հմտորեն շրջանցում է նմանատիպ ստեղծագործությունները, կա՛մ վերլուծում ծանծաղ քննությամբ: Այս ստեղծագործությունների լուսաբանման, գրականագիտական վերլուծման թերությունները առավել ակնբախ են դառնում բուհական ոլորտում: Ընտանիքում ամրագրված, բարոյական խիստ նորմերով սահմանափակ մտածելակերպը բուհում սովորելու ժամանակ արդեն ձեռք է բերում կեղծ երանգներ. այն այլևս համատեղելի չէ անձի չափահաս տարիքից ու կրթությունից բխող և հետզհետե ընդարձակվող որակական մտածողությանը: Այս շրջանում կրթողի նպատակը պիտի լինի ուսանողին նախևառաջ ընտանեկան

հոգեբանական դաստիարակության կաշկանդող կաղապարներից աստիճանական ձերբազատելը: Այն պետք է համատեղվի մի կողմից՝ ընտանիքում բարոյական արժեքներից սնվող ամոթխածությամբ պայմանավորված որոշակի բառերի արտասանության արգելքի վերացմամբ և մյուս կողմից՝ գրական երկի՝ ազատ, առանց կաշկանդումների վերլուծություններով: Միով բանիվ՝ ստեղծագործությունները հասկանալու համար հարկ է ապահովել Ջոհրապի ասած՝ բարոյական և իմացական հատուկ միջավայրը:

Արևմտահայ իրականության մեջ Ջոհրապի առաջիններից էր, որ ցույց տվեց կրթության և դաստիարակության հարցի մարդաբանական գործոնները՝ հաշվի առնելու հրամայականը: Ըստ նրա՝ ուսուցանման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն տարիքային յուրահատկությունները, այլև սեռերի բնականոն տարբերության գործոնը և ըստ այդմ՝ սուբյեկտիվ ընկալունակության սահմանները: 1892 թ. հրատարակած «Անբարոյական գրականություն» հոդվածում հեղինակն ինքը գրում էր, որ գրական ստեղծագործություններում նկարագրվող տեսարանները, մարդիկ, հոգեկանը չեն կարող բարոյական կամ անբարոյական համարվել: «Գրականութունը իր նպատակովը միայն կրնայ բարոյական կամ անբարոյական հոչակուիլ. նկարագրութունները արուեստական խնդիրներ են, որոնք չեն կրնար երբեք անբարոյականութեան համար իբրև փաստ յառաջ բերուիլ...»,- գրում է Ջոհրապը և եզրափակում, որ գրականությունը այն ժամանակ կարող է անբարոյական համարվել, երբ «առաջադրած նպատակն ըլլայ ընթերցողներ ցանկութեամբ ու տարփանոք վարակել...» [Ջոհրապ, 2002: 103]:

Նշյալ հեղինակներին բուհում ներկայացելուց առաջ, իհա՛րկե, ուսանողին պետք մասամբ ծանոթացնել նրանց աշխարհայացքին, այն ձևավորած գրական ուղղությանը, գրական ազդեցություններին ու մանավանդ կրթադաստիարակչական դատողություններին: Երկի գրականագիտական վերլուծումից զատ հարկ է խուսանավող ուսանողին հաղթահարել տալ ստեղծագործությունների՝ լսարանում չարտասանվող, կեղծ բարեպաշտությամբ սքողված բառերի՝ սեռ, կենակցել, հղիանալ, մարմնավաճառ և այլն, արտաբերման բարդույթը: Ուսանողին, ինչպես նաև ավագ դպրոցի աշակերտին, պետք է հորդորել չկաղապարվել սին պարկեշտության սահմաններում, բացատրական բառարանով ապացուցել, որ Մեծարենցի, Ջոհրապի և այլ գրողների օր.՝ փոստալ, հեշտագին, տոփանք և նման բառերը հայերենի բառաֆոնդից են, անգամ գրական, «Շրթունքս են ծարաւ միակ համբոյրին» (Մեծարենցի «Սիրերգ») տողը սիրո զգացումով ապրելու իղձն է, և, անշո՛ւշտ, զազրելի չէ գրական վերլուծությունների ժամանակ այս և նման բառեր արտաբերելը: Արևմտահայերենով ստեղծագործությունների ուսուցման գործընթացում բարդություն կա մանավանդ կանանց կերպարների քննման առումով:

Վարուժանն ու Շահնուրը իրենց ստեղծագործությունների հիմնական թեմային միահյուսել են ազատ սիրո, ազգային ավանդույթներից դուրս գալու մոտիվներ [Վարդանյան, 1987], որոնք նրանց աշխարհայացքային ընկալումների հայեցակարգով մեկնաբանելու դեպքում չեն խեղաթյուրվելու և երիտասարդի համար

բացելու են կրթագիտական մտահանգման լայն հորիզոններ: 12-րդ դասարանի գրականության դասագրքում Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի վերլուծության մեջ [Գասպարյան, Քալանթարյան, 2011: 28-35] հստակ պարզաբանվում է, թե անառակ կանանց հետ ամուսնական և արտամուսնական կապերը ինչ ճակատագրերի են արժանացնում հերոսներին: Բայց բուհ ընդունվել ցանկացող աշակերտը և նոր ընդունված ուսանողը մեծամասամբ շրջանցում են այս վերլուծությունը:

Վերոնշյալ ստեղծագործությունների խորաքնին ընթերցումը, կերպարների հոգեբանական գծերի աստիճանական բացահայտումը. խնդրահարույց հարցերի պատասխանները գտնելու համար երբեմն անհրաժեշտ է դրդել ուսանողին պատմահամեմատական մեթոդ կիրառելու և գրական ծանոթ ստեղծագործություններից գրական-գեղարվեստական նմանատիպ մոտիվներ ու պատկերներ համադրելու: Մերժելի չէ նաև անդրադառնալ այսօրվա իրականության նման երևույթներին, սակայն այնպես, որ ուսանողի միտքը կապակցված մնա քննման առարկա ստեղծագործություններին և սոցիալ-հասարակական խնդիրները կարողանա ազուցել գրողների երկերի ժամանակաշրջանից բխող հանգամանքներին, միևնույն ժամանակ ընկալի հիշյալ ստեղծագործությունների արդիականությունն ի՛ր ժամանակում:

Այսօր էլ դեռ շարունակվում են հաղթահարվել արևմտահայերենով ստեղծագործությունների ուսուցման բարդությունները: Հասարակության պարտադրած կեղծ արժեքները, լեզուն ու որոշակի թեմաները ընկալելու դժվարությունները խանգարում են ուսանողին լայնորեն և առանց քաղքենի ամոթի ուսումնասիրել Զոհրապի նովելները, Վարուժանի և Մեծարենցի որոշ բանաստեղծություններ, քննել սեռի խնդիրը ազգային մտահոգության՝ նահանջի համապատկերում, իսկ ուսուցչին՝ ուսուցանել դրանք առանց դժվարությունների:

CHALLENGES IN TEACHING WESTERN ARMENIAN AND DIASPORA LITERARY WORKS IN THE FINAL SCHOOL YEARS AND EARLY UNIVERSITY STUDIES

Key words: *Western Armenian, school, university, literature, textbook, education, moral environment.*

The article addresses key challenges in teaching Western Armenian and Diaspora literature, including language barriers and thematic complexity. It focuses on gender, morality, and female character portrayals, shaped by educational methods and societal bias. Suggested solutions aim to enhance literary understanding and teaching in today's Armenian educational context.

ТРУДНОСТИ ПРЕПОДАВАНИЯ ЗАПАДНОАРМЯНСКОЙ И ДИАСПОРАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ В ВЫПУСКНЫХ КЛАССАХ ШКОЛЫ И НА НАЧАЛЬНОМ ЭТАПЕ ОБУЧЕНИЯ В ВУЗЕ

Ключевые слова: *западноармянский язык, школа, вуз, литература, учебник, образование. нравственная среда.*

Статья рассматривает основные трудности преподавания западноармянской и диаспоральной литературы, включая языковые барьеры и сложные темы. Особое внимание уделяется гендеру, морали и образу женщины в условиях методологических ограничений и общественных предубеждений. Предлагаются решения, способствующие лучшему пониманию и преподаванию литературы в современных условиях.

Գրականություն

1. Ջոհրապ Գ. 2002, Երկերի ժողովածու, 4 հատորով՝ Ա, Բ, Գ, Դ. Գ հատոր, Երևան:
2. Գասպարյան Դ. և Քալանթարյան Ժ. 2010, Հայ գրականություն, դասագիրք հանրակրթական դպրոցի տասնմեկերորդ դասարանի համար. հումանիտար հոսք, Երևան:
3. Վարդանյան Խ. 1987, Դանիել Վարուժանի «Հեթանոս երգերի» գնահատման շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, հատ. 8(8), էջ 25-35:
4. Գասպարյան Դ. և Քալանթարյան Ժ. 2011, Հայ գրականություն, դասագիրք հանրակրթական դպրոցի տասներկուերորդ դասարանի համար, հումանիտար հոսք, Երևան: